

ք. Գյումրի
թ. _____

« _____ » « _____ » 2020

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետ Տ.Պետրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս _____, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1. Պայմանագրով սահմանվում է «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1196 մարզերի մշակութային զարգացման 11001 «Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» պետական ծրագրով ընթացիկ դրամաշնորհների տրամադրման կարգը, որի շրջանակներում Կատարողը մատուցում է հետևյալ ծառայությունները՝ **2020 թվականի սեպտեմբերի 21-ին ՀՀ Շիրակի մարզում կազմակերպել և անցկացնել «Անկախության օր»** մշակութային միջոցառումը (այսուհետ՝ Պատվեր)՝ Պայմանագրով սահմանված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է բյուջեից հատկացված գումարի _____ շրջանակներում Կատարողին տրամադրել **ՀՀ դրամ:**

2. Ծառայության ընդհանուր նկարագրությունը և արժեքը ներկայացված են Պայմանագրի «**Հավելված 1**»-ում և «**Հավելված 2**»-ում:

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2) Պահանջել Կատարողից Պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

4. Պատվիրատուն պարտավոր է.

1) Պայմանագրի շրջանակներում աջակցել Կատարողին:

5. Կատարողն իրավունք ունի.

1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

6. Կատարողը պարտավոր է.

1) Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2) Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

4) Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման կարգը և ժամկետները

7. 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության չափը կազմում է _____ **ՀՀ դրամ:**

8. Կատարողը Պատվերի ավարտից հետո՝ մինչև **2020 թվականի հոկտեմբերի 21-ը** պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի վերաբերյալ:

9. Պատվիրատուն հանձնման-ընդունման ակտը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը: Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

10. Պատվիրատուն Պայմանագրի 7-րդ կետում նշված գումարը վճարում է Պատվերի իրականացումից հետո՝ մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

11. Պատվերի գնում ներառված ավելացված արժեքի հարկը Կատարողին վճարվում է հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

Կողմերի պատասխանատվությունը

12. Պայմանագրով հատկացված գումարի շրջանակներում Կատարողի կողմից աշխատանքների և ծառայությունների գնումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

13. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրի գործողության ժամկետը

14. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **2020 թվականի հոկտեմբերի 28-ը**:

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

15. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Եզրափակիչ դրույթներ

16. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

17. Պայմանագիրը և հավելվածները կնքված են հայերեն լեզվով, Պայմանագիրը կազմված է 2 էջից և ունի 2 հավելված՝ Հավելված 1՝ 2 էջ, Հավելված 2՝ 1 էջ, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Հասցեն՝ _____
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	Բանկ՝ _____ Հ/Հ _____
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ _____
ՀՀ Շիրակի մարզպետ՝	_____
Տ.Պետրոսյան	_____

Կ.Տ.

Կ.Տ.

«Հավելված 1»

« » _____ 2020 թ. N ՄՄԲ ____ պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
/ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ/
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Անցկացման ժամկետը՝ 2020 թ., 21-ը սեպտեմբերի

Անցկացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության անկախության 29-ամյակին նվիրված տոնական միջոցառմանը մասնակցության համար կիրավորվեն պետական ու հասարակական գործիչներ, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, Հայրենական մեծ պատերազմի ու արցախյան հերոսամարտի վետերաններ, տարբեր ոլորտների վաստակաշատ աշխատողներ, մարզի տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքի տարբեր ասպարեզներում նշանակալի ձեռքբերումների հասած անկախության սերնդի ներկայացուցիչներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Հասցեն՝ _____
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	Բանկ՝ _____ Հ/Հ _____
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ _____
ՀՀ Շիրակի մարզպետ՝	_____
Տ.Պետրոսյան	_____

Կ.Տ.

Կ.Տ.

«Հավելված 2»

« » _____ 2020 թ. N ՄՄԲ ____ պայմանագրի

ՆԱԽԱՅԱՇԻՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ**

h/h	Ճախսի անվանումը	Քանակը	Չափման միավորը	Միավոր արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը արժեքը /ՀՀ դրամ/
1.					
2.					
3.					

4.					
5.					
Ընդամենը՝					

Ընդհանուր ծախսը կազմում է _____ ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	_____
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Հասցեն՝ _____
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	Բանկ՝ _____ Հ/Հ _____
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ _____
ՀՀ Շիրակի մարզպետ՝	_____
Տ.Պետրոսյան	_____

Կ.Տ.

Կ.Տ.